https://time.com/5898960/armenia-azerbaijan-russia-cease-fire-fails/?fbclid=IwAR3_Xazgh10CePJdFxRTK4_EfNAwmclZVPkS8yOnCdPdW0CB-HQHXyEGBGE

Հայաստանն ու Ադրբեջանը հայտարարում են, որ Ռուսաստանի միջնորդությամբ կնքված հրադադարը չի պահպանվում

Ստեփանակերտ, Լեռնային Ղարաբաղ (AP Photo)

Ըստ Associated Press-ի լրագրող Վլադիմիր Իսաչենկովի

10.10.2020

Մոսկվա – Հայաստանն ու Ադրբեջանը համաձայնեցին Ռուսաստանի միջնորդությամբ շաբաթ օրվանից Լեռնային Ղարաբաղում հայտարարել հրադադար, ինչից անմիջապես հետո միմյանց մեղադրեցին պայմանավորվածության խախտման

համար: Հրադադարը կոչված էր վերջ դնելու վերջին ավելի քան քառորդ դարի ընթացքում այս տարածաշրջանում ընթացող ռազմական գործողությունների նոր բռնկմանը:

Երկու կողմերն էլ փոխադարձաբար դատապարտեցին կեսօրին (միջին աշխարհագրական ժամանակով ժամը 08:00-ին, իսկ Երևանի ժամանակով՝ ժամը 12:00-ին) ուժի մեջ մտած հրադադարի խախտումը, որն ուղեկցվեց նոր զրոհներով, իսկ Ադրբեջանի բարձրաստիճան դիվանագետը հայտարարեց, որ հրադադարը երբեք էլ ուժի մեջ չէր մտել:

Հրադադարի մասին հայտարարությունն արվեց գիշերը՝ Ռուսաստանի արտգործնախարար Սերգեյ Լավրովի նախաձեռնությամբ Մոսկվայում կայացած 10-ժամյա բանակցություններից հետո: Համաձայնագիրը նախատեսում էր հրադադարի հաստատմամբ ճանապարհ հարթել հակամարտության կարգավորմանն ուղղված բանակցությունների համար:

Հրադադարի պահպանումը կնշանակեր խոշոր դիվանագիտական հաջողություն Ռուսաստանի համար, որը Հայաստանի հետ պաշտպանության մասին համաձայնագիր ունի, բայց նաև ջերմ հարաբերություններ է զարգացրել Ադրբեջանի հետ: Սակայն խախտումների վերաբերյալ փոխադարձ պնդումների արդյունքում համաձայնագիրն անմիջապես վիճարկվեց:

Հրադադարի՝ ուժի մեջ մտնելուց րոպեներ անց հայկական զինված ուժերը Ադրբեջանին մեղադրեցին Հայաստանի հարավ-արևելքում գտնվող Կապան քաղաքի մերձակա տարածքը գնդակոծելու մեջ, ինչի հետևանքով զոհվել է մեկ խաղաղ բնակիչ: Ադրբեջանի պաշտպանության նախարարությունը հերքեց Հայաստանի մեղադրանքները՝ դրանք որակելով որպես «սադրանք»:

Ադրբեջանի զինված ուժերն իրենց հերթին Հայաստանին մեղադրեցին Ադրբեջանի Թերթեր և Աղդամ շրջաններին հրթիռային հարվածներ հասցնելու, այնուհետև Աղդեր-Թերթեր և Ֆիզուլի-Ջաբրայիլ ուղղություններով հարձակում սկսելու փորձի մեջ: Ադրբեջանի արտաքին գործերի նախարար Ջեյհուն Բայրամովը մեղադրաբար

հայտարարեց, որ հայկական կողմի շարունակական գնդակոծությունների ֆոնին «ներկայումս բացակայում են հումանիտար հրադադարի իրագործման պայմանները»:

ՀՀ Պաշտպանության նախարարությունը հերքեց հայկական ուժերի կողմից հրադադարի ռեժիմի որևէ խախտում:

Ադրբեջանական և հայկական զորքերի միջև ռազմական գործողությունների վերջին բռնկումը սկսվեց սեպտեմբերի 27-ին: 1994թ-ի անջատողական պատերազմի ավարտից ի վեր Լեռնային Ղարաբաղի հարցի՝ վերջին տասնամյակների ամենամեծ այս սրումը հանգեցրեց հարյուրավոր մարդկանց մահվան: Ադրբեջանի տարածքում գտնվող այս տարածաշրջանը Հայաստանի կողմից աջակցվող էթնիկ հայկական ուժերի վերահսկողության տակ է:

Վերջին մարտական գործողությունների սկզբից Հայաստանը հայտարարեց, որ բաց է կրակի դադարեցման համաձայնության համար, մինչդեռ Ադրբեջանը պնդում էր, որ զինադադարը պետք է պայմանավորված լինի Լեռնային Ղարաբաղից հայկական զորքերի դուրսբերմամբ՝ պնդելով, որ քաղաքական կարգավորման հասնելու միջազգային ջանքերի ձախողումն իրեն այլ ելք չի թողնում, քան ուժի դիմելը:

Հայաստանի և Ադրբեջանի արտաքին գործերի նախարարները Մոսկվայում հրադադար ստորագրեցին այն բանից հետո, երբ Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի և ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի հետ մի շարք հեռախոսազրույցներից հետո հանդես եկավ որպես միջնորդ կողմ:

Ռուսաստանը Լեռնային Ղարաբաղի հարցի շուրջ խաղաղ բանակցությունները նախաձեռնել է ԱՄՆ-ի և Ֆրանսիայի հետ համատեղ՝ որպես այսպես կոչված ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրներ: Վերջիններս ոչ մի համաձայնագիր չեն կնքել, ինչն էլ ավելի է վրդովեցրել Ադրբեջանին:

Ուրբաթ օրը՝ հրադադարի կնքումից ժամեր առաջ, ադրբեջանական հանրությանն ուղղված իր ելույթում Ալիևը պնդեց, որ Ադրբեջանն իրավունք ունի ուժով վերադարձնելու իր տարածքը գրեթե երեք տասնամյակ տևած միջազգային բանակցություններից հետո, որոնք «ոչ մի թիզ առաջընթաց չեն գրանցել»:

Նրա օգնական Հիքմաթ Հաջիևը հայտարարեց, որ Մինսկի խումբը պետք է Լեռնային Ղարաբաղից հայկական ուժերի դուրսբերման կոնկրետ ծրագիր առաջարկի: «Հարավային Կովկասում խաղաղություն չի լինի այնքան ժամանակ, քանի դեռ հայկական զորքերը չեն հեռացել օկուպացված տարածքներից», - նշել է նա:

Լեռնային Ղարաբաղի ողջ տարածքով ծավալվել են մարտեր՝ ծանր հրետանու, ռազմական ինքնաթիռների և անօդաչու թռչող սարքերի գործադրմամբ, ինչն ուղեկցվել է երկու կողմերի՝ բնակելի շրջաններին և քաղաքացիական ենթակառուցվածքներին հարվածներ հասցնելու փոխադարձ մեղադրանքներով:

Լեռնային Ղարաբաղի զինված ուժերի տվյալներով ՝ սեպտեմբերի 27-ից ի վեր զոհվել է ղարաբաղյան կողմի 404 զինծառայող: Ադրբեջանը մանրամասներ չի ներկայացրել իր ռազմական կորուստների վերաբերյալ: Թեև երկու կողմից էլ տասնյակ խաղաղ բնակիչներ են սպանվել:

Ներկայիս էսկալացիան նշանավորվեց նրանով, որ Ադրբեջանի դաշնակից Թուրքիան նկատելի դիրք զբաղեցրեց հակամարտության մեջ՝ Ադրբեջանին առաջարկելով լուրջ քաղաքական աջակցություն: Վերջին մի քանի տարիների ընթացքում Թուրքիան Ադրբեջանին տրամադրել է գերժամանակակից զենքեր, այդ թվում՝ անօդաչու թռչող սարքեր և հրթիռային համալիրներ, որոնք ադրբեջանական զինուժին օգնել են վերջին մարտերում Լեռնային Ղարաբաղի ուժերի նկատմամբ հասնելու զգալի առավելության:

Հայ պաշտոնյաները հայտարարել են, որ Թուրքիան ներգրավված է հակամարտության մեջ և սիրիացի վարձկաններ է ուղարկում արբեջանական կողմից պատերազմելու համար: Թուրքիան հերքել է տարածաշրջանում գրոհայինների ներկայությունը, սակայն սիրիացի ռազմական մի դիտորդ ու Սիրիայի ընդդիմադիր երեք ակտիվիստներ հաստատել են, որ Թուրքիան սիրիական ընդդիմության հարյուրավոր մարտիկներ է ուղարկել Լեռնային Ղարաբաղում պատերազմելու:

Թուրքիայի ներգրավվածությունը հակամարտության մեջ Հայաստանում ցավոտ հիշողություններ է արթնացրել 1915թ.-ին սկսված զանգվածային ջարդերի, բռնի տեղահանությունների ու գաղթերի հետևանքով զոհված 1,5 միլիոն հայերի մասին:

Շատ պատմաբաններ այս դեպքերը գնահատում են որպես ցեղասպանություն, թեև Թուրքիան մինչև օրս ժխտում է դա:

Այս բախման մեջ Թուրքիայի խիստ տեսանելի դերը անհանգստացրեց Հայաստանում ռազմաբազա ունեցող Ռուսաստանին: Ռուսաստանն ու Հայաստանը կապված են անվտանգության մասին պայմանագրով, ինչը Մոսկվային պարտավորեցնում է ագրեսիայի դեպքում աջակցել իր դաշնակցին:

Սակայն միևնույն ժամանակ Ռուսաստանը ձգտում է ամուր տնտեսական և քաղաքական կապեր պահպանելու նավթով հարուստ Ադրբեջանի հետ և չփչացնելով Անկարայի հետ ունեցած իր նուրբ հարաբերությունները՝ կանխել Հարավային Կովկասում իր ազդեցությունը ուժեղացնելու Թուրքիայի փորձերը:

Պուտինը և Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը բանակցել են Սիրիայում և Լիբիայում իրենց հակասական շահերի համաձայնեցման և տնտեսական կապերի ընդլայնման վերաբերյալ մի շարք գործարքներ կնքելու շուրջ: Անցյալ տարի ՆԱՏՕ-ի անդամ Թուրքիան ընդունեց ռուսական C-400 տեսակի հակաօդային պաշտպանության հրթիռների մատակարարումը, ինչը զայրացրեց Վաշինգտոնին:

Լեռնային Ղարաբաղում տևական հրադադարը Կրեմլին թույլ կտար կասեցնել Թուրքիայի՝ Ռուսաստանի «թիկունքում» իր ազդեցությունը ընդլայնելու փորձերը՝ միաժամանակ չխաթարելով Անկարայի հետ իր ռազմավարական հարաբերությունները:

Թուրքիայի արտաքին գործերի նախարարությունը հայտարարել է, որ այդ համաձայնագիրը «առաջին կարևոր քայլն է, սակայն չի կարող փոխարինել հարցի վերջնական լուծմանը»:

«Սկզբից ևեթ Թուրքիան մշտապես ընդգծել է, որ աջակցելու է միայն այն որոշումներին, որոնք ընդունելի են Ադրբեջանի համար», - ասվում է հայտարարության մեջ:

Մինչ Թուրքիան հավակնում էր որպես համանախագահ միանալ Մինսկի խմբի բանակցություններին, Հայաստանի և Ադրբեջանի կողմից հրապարակված

հայտարարության մեջ նշվում էր խաղաղ բանակցությունների ներկայիս ձևաչափը պահպանելու իրենց խոստումը:

Բանակցություններից անմիջապես հետո հեռուստատեսային ելույթի ժամանակ Հայաստանի արտգործնախարար Զոհրաբ Մնացականյանն ընդգծեց, որ «ոչ մի այլ ուժ, մասնավորապես Թուրքիան, այդ առումով որևէ դերակատարություն չի կարող ունենալ»:

Ֆրանսիայի արտգործնախարարությունը ողջունեց հրադադարի մասին հայտարարությունը՝ հավելելով, որ «այժմ այն պետք է գործի դրվի և խստորեն հարգվի՝ երկու երկրների միջև ռազմական գործողությունների մշտական դադարեցման պայմաններ ստեղծելու համար»:

Այս հոդվածին թղթակցել են Associated Press-ի լրագրողներ Ավետ Դեմուրյանը (Երևան, Հայաստան), Միդա Սուլթանովան (Բաքու, Ադրբեջան) և Էլեյն Գանլին (Փարիզ, Ֆրանսիա):

Թարգմանությունը՝ Մելինե Պապոյանի

Ղեկավար՝ Անահիտ Մկրտչյան